ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 Թ. ԱՊՐԻԼԻ 25-Ի ԹԻՎ 13 ՆԻՍՏԻ

Օրակարգում

1. Ֆակուլտետի ՈՒԽ նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների վերաբերյալ:
2. Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2024-25 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
3. Ուսումնաարտադրական պրակտիկաների արդյունքների քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

1. Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան- Հարգելի գործընկերներ օրակարգը ներկայացված էր, եթե առաջարկներ չունեք ապա սկսենք մեր աշխատանքը ըստ ներկայացված օրակարգի:

ՈՒԽ-նախագահ Էմմա Վարդանյանը ներկայացրեց կատարված աշխատանքների վերաբերյալ հաղորդում(հաղորդումը կցվում է):

Է. Վարդանյանին հարցեր ուղղեցին

1. Ռ.Պ.Մխիթարյան - ՈՒԽ-ի ներկայացրած հաղորդման ընթացքում միայն նշեցիք մրցույթները և այցերը, որն է Ձեր նպատակը:

Է.Վարդանյան- ՈՒԽ հիմնական գործելաոճը ուսանողներին աջակցելն է՝ կլինա դա առաջին կուրսեցիների ինտեգրումը ուսանողական կյանքին, թե դասերի ընթացքում առաջացած խնդիրների վերացումը:

Ռ.Պ.Մխիթարյան – Ինչ խնդիրներ են եղել դասընթացների ժամանակ

Է.Վարդանյան- Առաջին կուսեցիների մոտ պայմանավորված «ֆիզիկա» առարկայի հետ և «քաղ. պաշտպանություն» ամբիոնում: հարցերը պարզվել են և խնդիրները վերացվել են:

2.Ա.Ս.Գալստյան – Ինչ կասեք ստենդների համար: Ես նայում եմ ստենդներում արդեն 3 տարի է փոփոխություններ չեն կատարվել: Դուք օգտվում եք էլեկտրոնային տարբեր հարթակներից, մի գուցե ստենդները հանենք;

Է.Վարդանյան – ստենդերը մեզ պետք են, մենք կկատարենք թարմացում:

Ա.Ս.Գալստյան – Եթե մոտակա մեկ շաբաթում փոփոխություն կամ թարմացում չկատարվի՝ այդ ստենդերը կհանվեն։

2. Տ.Վ.Ղոչիկյան – Օրակարգում ներառված է օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը 2024-2025 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ։

Քիմիայի ֆակուլտետում գործող «Քիմիա» մագիստրոսական ծրագրի ղեկավար, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյանի հաշվետվությունը 2024-2025 ուս. տարում կատարած աշխատանքների վերաբերյալ։

Ն.Ա.Դուրգարյանը նշեց, որ «Քիմիա» մագիստրոսական ծրագիրը շրջանավարտները հունվարին բարձր միավորներով պաշտպանել են թեզերը։ Ուսումնական տարվա ընթացքում իրականացրել ենք բազմաթիվ հանդիպումներ առաջին կուրսի ուսանողների հետ։ Առաջին կուրսեցիները (թվով 5 ուսանող) ծանոթացել են կրթական ծրագրին, մասնագրերին, գնահատման նոր կարգի հետ։ Ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար հանդիպումներ են եղել ուսանողների հետ՝ քննարկելու իրենց հուզող հարցերը, գնահատման բազմաբաղադրիչ համակարգի, դասընթացների, լաբորատոր պարապմունքների, պրակտիկայի հետ կապված հարցերը։ Լաբորատոր աշխատանքները իրականացվում են անհատական, սակայն նույնը չեմ կարող ասել կենսաբանության, կենսա-քիմիայի ֆակուլտետների ուսանողների համար։ Որքան էլ պնդել ենք միևնույն է այս ֆակուլտետներում խումը 15-16 ուսանող է հետևաբար այս պայմաններում , երբ լաբորատոր աշխատանքները կատարում ենք գիտահետազոտական լաբորատորիաներում անհատական աշխատանքների մասին խոսք լինել չի կարող։ Ամբիոնում թարմացվել են ծրագրերը , որոշ ծրագրեր ամբողջությամբ փոխվել են։ Ամբիոնում կատարվող ավարտական աշխատանքների մի մասը վերջացված են , իսկ մյուս մասը գտվում են ձևակերպման փուլում։ Այստեղ մեծ խնդիր է հանդիսանում պրակտիկաները, որոնք 6 շաբաթ տևողությամբ են և 8-րդ կիսամյակում։ Հուսով եմ մինչև այս ուսումնական տարվա վերջ կկահավորվեն և ավարտված կլինեն 132 և 117 լաբորատորիաները։

<u>ՈՐՈՇԵՑԻՆ.</u>

Հաշվի առնելով կատարված աշխատանքի ծավալը և որակը, Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը քվեարկության միաձայն արդյունքով որոշեց ընդունել «Քիմիա» մագիստրոսական ծրագրի ղեկավար, պրոֆեսոր Ն.Ա.Դուրգարյանի հաշվետվությունը։

3. Ուսումնաարտադրական պրակտիկաների արդյունքները կներկայացրեցին Ի.Լ.Ալեքսանյանը և Ռ.Պ.Մխիթարյանը։ Դասախոսները ներկայացրեցին կատարված աշխատանքները նշելով, որ դժգոհություններ կան ՍԱՏՄ-ից, հետևաբար պետք

ղեկավարությանը կանչել քննարկման և, եթե դրական փոփոխություններ չլինեն, ապա պետք է հրաժարվել նրանաց հետ համագործակցությունից:

4. Տ.Վ.Ղոչիկյան ընթացիկ հարցերում ունենք միայն մեկ հարց՝ Քիմիայի ֆակուլտետի գիտխորհրդին է դիմել, օրգանական քիմիայի ամբիոնի դոցենտ Մ.Ա.Սամվելյանը՝ Բ.00.03 ծածկագրով, ասպիրանտների և հայցորդների ղեկավարման թույլտվություն ստանալու հարցը:

Ելույթ ունեցան - Քիմիայի ֆակուլտետի դեկան Տ.Ղոչիկյանը հաղորդեց, որ Մելանյա Սամվելյանը թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 2008թ-ին, 2013թ-ին ստացել է դոցենտի կոչումը, 2018-ից ավագ գիտաշխատող է, իսկ 2021 թ-ից օրգանական քիմիայի ամբիոնի դոցենտ: Գիտական գործունեության ընթացքում հրատարկել է 1 - ուսումնամեթոդական ձեռնարկ, 16- հեղինակային իրավունք, 61 հոդված, որից 18 ՄԳԾ-ում և 57 թեզիս: Վերջին հինգ տարում՝ 9 արտոնագիր, 13 հոդված, որից 8 –ը ՄԳԾ-ում:

Որոշեցին – Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը՝ միաձայն բաց քվեարկությամբ որոշեց. դիմել ԵՊՀ ռեկտոր պրն. Հ.Վ.Հովհաննիսյանին միջնորդելու, դիմել Բարձրագույն որակավորման կոմիտե (ԲՈԿ), օրգանական քիմիայի ամբիոնի դոցենտ Մ.Ա.Սամվելյանի՝ Բ.00.03 ծածկագրով, ասպիրանտների և հայցորդների ղեկավարման թույլտվություն ստանալու համար:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր՝ Տ.Վ.Ղոչիկյան

Գիտ. քարտուղար, դոցենտ՝ Մ.Ա.Սամվելյան